

Թիւ 27041  
Հոկտեմբեր 17, 1980

Ազնուափայլ  
Տիկին Նեկտար Գանթարճեան  
Ռիչմընտ.

Ազնիւ Տիկին Գանթարճեան,

Տիար Երուանդ Սողոյեան եւ իր ընկերը մեզի յանձնեցինք ձեր կողմէ Առաջնորդարանիս նուիրուած նկարը, որուն համար կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:

Յիշեալ ասեղնագործ մեծադիր նկարը, որ ոսկեգօծ եւ գեղեցիկ շրջանակի մը մէջ առնուած է, Առաջնորդարանիս մէջ պիտի պահուի եւ ցուցադրուի ձեր ամուսիններուն՝ Մանուէլ Տէրտէրեանի եւ Հայկազ Գանթարճեանի անունով:

Մենք անձնապէս ճանչցած ենք ձեզ եւ եկեղեցասէր Մանուէլ Տէրտէրեանը այն տարիներուն, 1947-54, երբ մենք որպէս այցելու հովիւ ֆիլատելիֆիայէն կու գայինք Ռիչմընտ Ս. Պատարագ մատուցանելու համար:

Այս առթիւ կը փափաքինք ձեզի տեղեկացնել որ Առաջնորդարանի թանգարանին մէջ ունինք հայկական արժէքաւոր իրեր՝ որոնք զարդը կը կազմեն մեր հայ մշակոյթի ժառանգութեան: Մեր նպատակն է այսպիսի արժէքաւոր իրեր մէկտեղել եւ հանրութեան համար ցուցադրել՝ անոնց մէջ միշտ վառ պահելու համար մեր ազգային ոգին:

Եթէ հայկական դրոշմով կարգ մը իրեր ունիք ձեր տրամադրութեան տաք՝ մեծապէս շնորհակալ պիտի ըլլանք եթէ զանոնք նուիրէք Առաջնորդարանի թանգարանին, ուր պիտի ցուցադրուին յաւերժացնելով ձեր բարի յիշատակը:

Կ'աղօթենք որ Տէրը յաւիտենական հանգիստ պարգեւէ ձեր սիրելի ամուսիններուն հոգիներուն, եւ ձեզի ալ առաւել քաջառողջ ու երկար տարիներ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ